Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

Տրանսպորտային միջոցի անձնագրի (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի անձնագրի) և ինքնագնաց մեքենայի ու տեխնիկայի այլ տեսակների անձնագրի միասնական ձևերի ներդրման և էլեկտրոնային անձնագրերի համակարգերի կազմակերպման մասին

Մաքսային միության անդամ պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր, Եվրասիական տնտեսական ընկերակցության շրջանակներում, հիմք ընդունելով 2000 թվականի հոկտեմբերի 10-ի՝ «Եվրասիական տնտեսական ընկերակցության հիմնադրման մասին» պայմանագիրը, 2007 թվականի հոկտեմբերի 6-ի՝ «Միասնական մաքսային տարածք ձևավորելու և Մաքսային միություն ստեղծելու մասին» պայմանագիրը, 2011 թվականի նոյեմբերի 18-ի՝ «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» պայմանագիրը,

նպատակ ունենալով ապահովելու Մաքսային միության միասնական մաքսային տարածքում տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների ազատ շրջանառության համար համապատասխան պայմաններ և սահմանելու անձնագրերի միասնական ձևի կազմման կարգ տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների համար,

համաձայնեցին ներքոնշյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագիրը կարգավորում է հետևյալ հարցերը.

անձնագրերի միասնական ձևի կիրառում տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և

որպես տրանսպորտային միջոցներ (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակներ), ինքնագնաց մեքենաներ թողարկված տեխնիկայի այլ տեսակների համար, որոնք արտադրվել և ենթակա են գրանցման Կողմերի պետությունների տարածքներում,

էլեկտրոնային անձնագրերի կիրառում տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների համար, որոնք ձևակերպված են որպես տրանսպորտային միջոցներ, ինքնագնաց մեքենաներ և տեխնիկայի այլ տեսակներ, որոնք ենթակա են գրանցման Կողմերի պետությունների տարածքներում:

Հոդված 2

Սույն Համաձայնագրում օգտագործվող տերմինները նշանակում են՝

«տրանսպորտային միջոցների, (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների էլեկտրոնային անձնագրերի համակարգի ադմինիստրատոր»՝ կազմակերպություն, որի գործառույթն է տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների էլեկտրոնային անձնագրերի համակարգի նախագծմանն ուղղված գործողությունների համակարգումը՝ ներառյալ շահագործման հանձնումը, արտադրողականության օպտիմալացումը, հասանելիության ապահովում և հսկողություն, անվտանգության ապահովում, այդ համակարգերի տեխնիկական ապահովության հարցերի դիտարկումը, համակարգերի մասնակիցների և իշխանության մարմինների միջև փոխգործակցությունը, նոր մասնակիցների ներգրավումն այդ համակարգեր, ինչպես նաև այնպիսի միջոցների նախաձեռնումը, որոնք անհրաժեշտ են Կողմերի պետությունների՝ այդ համակարգերի գործառությունը կարգավորող օրենսդրական դաշտի համապատասխանեցման համար,

«ինքնագնաց մեքենայի և տեխնիկայի այլ տեսակների անձնագիր»՝ անձնագիր, որը տրվում է ավելի քան 50 սմ^3 աշխատանքային ծավալով ներքին այրման շարժիչով

կամ առավելագույն (ընդհանուր) հզորությունը 4 կվտ-ից բարձր կազմող էլեկտրական շարժիչ(ներ)ով աշխատող տրակտորներին, ինքնագնաց ճանապարհաշինական, կոմունալ, գյուղատնտեսական մեքենաներին և այլ վերգետնյա անռելս մեխանիկական տրանսպորտային միջոցներին (բացառությամբ ավտոշարժիչային տրանսպորտային միջոցների, որոնք նախատեսված են ընդհանուր օգտագործման ավտոճանապարհների երթևեկության համար, և որոնց նախագծային առավելագույն արագությունը կազմում է ավելի քան 50կմ/ժ), ինչպես նաև դրանց կցորդներին,

«տրանսպորտային միջոցի (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի)» անձնագիր՝ անձնագիր, որը տրվում է ավելի քան 50 սմ^3 աշխատանքային ծավալով ներքին այրման շարժիչով կամ առավելագույն (ընդհանուր) հզորությունը 4 կվտ-ից բարձր կազմող էլեկտրական շարժիչ(ներ)ով աշխատող և (կամ) ավելի քան 50 կմ/ժ նախագծային առավելագույն արագություն ունեցող ավտոտրանսպորտային միջոցներին, որոնք նախատեսված են ընդհանուր օգտագործման ավտոճանապարհներով երթևեկելու համար, ինչպես նաև դրանց կցորդների անձնագիր, որը տրվում է տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի համար, երբ այն առաքում են սպառողին),

«տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի) և ինքնագնաց մեքենաների և այլ տեխնիկայի տեսակների էլեկտրոնային անձնագրերի համակարգեր»՝ կառուցվածքային համալիրներ, որոնց մեջ մտնում են հաշվողական և հաղորդակցական սարքավորումները, ծրագրային ապահովությունը, լինգվիստական միջոցները, տեղեկատվական ռեսուրսները, համակարգային անձնակազմը և այդ համակարգերով սահմանված կանոններով միմյանց հետ փոխգործակցող մասնակիցները և օգտատերերը, ինչպես նաև այդ համակարգերի համար սահմանված գործառույթների կատարման շրջանակներում տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառողները,

«տրանսպորտային միջոցի էլեկտրոնային անձնագիր»՝ ինքնագնաց մեքենայի և տեխնիկայի այլ տեսակների անձնագիր, որը կազմվել է տրանսպորտային միջոցների

(տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի) էլեկտրոնային անձնագրերի համակարգում՝ ըստ սույն Համաձայնագրով սահմանված կարգի:

Հոդված 3

Տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների էլեկտրոնային անձնագրերի համակարգի գործողության կարգը սահմանվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից:

Տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների էլեկտրոնային անձնագրերի կազմման կանոնները, կառուցվածքն ու ձևաչափը որոշվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից:

Մինչև տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների էլեկտրոնային անձնագրերի համակարգերի գործողությունը կիրառվում է տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների անձնագրերի միասնական ձև:

Տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների անձնագրերի միասնական ձևին ներկայացված պահանջները, դրանց լրացման կարգը և տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների անձնագրերի ձևաթղթի մասին տեղեկության փոխանակման կարգը, ինչպես նաև դրանց կիրառման մեկնարկային ժամկետները սահմանվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից:

Տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների

անձնագրերի միասնական ձևի լրացման ժամանակ «Հատուկ նշումներ» տողում նշվում է Մաքսային միության այն անդամ պետությունը, որի տարածքում նախատեսված է կոնկրետ տրանսպորտային միջոցի (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակը), ինքնագնաց մեքենայի կամ տեխնիկայի այլ տեսակների առաջնային շրջանառությունը՝ Մաքսային միության տվյալ անդամ պետության կողմից սահմանված պահանջների համաձայն:

Մինչև տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների անձնագրի միասնական ձևի կիրառումը տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների անձնագրերը ձևակերպվում են սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածի համաձայն:

Հոդված 4

Սույն Համաձայնագրի իրականացման նպատակով ձևավորվում է Մաքսային միության անդամ պետությունների լիազոր մարմինների (կազմակերպությունների) և տրանսպորտային միջոցներ (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակներ), ինքնագնաց մեքենաներ և տեխնիկայի այլ տեսակների արտադրող կազմակերպությունների Միասնական պաշտոնական գրանցամատյան, որոնք իրականացնում են տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների անձնագրերի ձևակերպում, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների էլեկտրոնային անձնագրերի ձևակերպում (այսուհետ՝ Միասնական գրանցամատյան):

Միասնական գրանցամատյանի կազմման և գրանցումներ կատարելու կարգը հաստատում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովը:

Միասնական գրանցամատյանը կազմում և գրանցումներ կատարում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովը:

Հոդված 5

Մինչև տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների էլեկտրոնային անձնագրի կիրառումը տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների անձնագրերը ձևակերպվում են տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների՝ Միասնական գրանցամատյանում գրանցված արտադրող կազմակերպությունների (այսուհետ՝ Արտադրող կազմակերպություններ) կողմից՝ որպես նրանց կողմից արտադրված տրանսպորտային միջոցներ, (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակներ), ինքնագնաց մեքենաներ և տեխնիկայի այլ տեսակներ:

Մինչև տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների էլեկտրոնային անձնագրի կիրառումը տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների անձնագրերը Կողմերի պետությունների օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ձևակերպվում են նաև Կողմերի պետությունների լիազոր մարմինների (կազմակերպությունների) կողմից:

Տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների էլեկտրոնային անձնագրերը ձևակերպվում են 2015 թվականի հուլիսի 1-ից Կողմերի պետությունների լիազոր մարմինների (կազմակերպությունների) և Արտադրող կազմակերպությունների կողմից, որոնք ներառված են Միասնական գրանցամատյանում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հաստատված կարգով:

Հոդված 6

Մարմինները (կազմակերպությունները), որոնք հաստատվում են Կողմերի պետությունների կողմից, որոշում են տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների անձնագրերի պաշտպանական տարրերին ուղղված պահանջները տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների անձնագրերի միասնական ձևի պահանջներին համապատասխան, և ներկայացնում այն Կողմերի պետությունների մարմիններին, որոնք իրականացնում են տրանսպորտային միջոցների պետական գրանցում, և՝ Կողմերի պետությունների այն մարմիններին, որոնք իրականացնում են պետական գրանցում ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների համար:

Հոդված 7

Տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների էլեկտրոնային անձնագրերի համակարգերն ապահովում են աջակցություն տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների էլեկտրոնային անձնագրերի ձևակերպման գործընթացի միասնական դինամիկ տեղեկատվական մոդելին և կիրառում են տեղեկատվական տեխնոլոգիաներ այդ համակարգերի մասնակիցների տեղեկատվական պահանջների բավարարման նպատակով սահմանված գործառույթների կատարման համար: Նշված համակարգերի միջոցով ապահովում են տեղեկատվական դաշտի միասնականությունը, հասանելիության միասնական

վերահսկողությունը, միասնական միջոցառումները՝ ուղղված տվյալների անվտանգությանը, ամբողջականությանն ու ապահովությանը, նաև կազմակերպվում է այս համակարգերի մասնակիցների և իշխանության մարմինների միջև կենտրոնացված փոխգործակցություն, նախաձեռնվում են հավելյալ միջոցներ, որոնք անհրաժեշտ են տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների էլեկտրոնային անձնագրերի ձևակերպման փուլում Կողմերի պետությունների օրենսդրական դաշտերի ներդաշնակեցման համար, ապահովվում է միասնական վերահսկողություն տեխնիկական կանոնակարգով սահմանված և Կողմերի կողմից ճանաչված պարտադիր պահանջների կատարման նկատմամբ, ինչպես նաև տեղեկության հավաստիության կենտրոնացված ստուգում, Կողմերի համար պարտադիր պահանջների միասնականության ապահովման կենտրոնացված մշտադիտարկում և սահմանվում են տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների համապատասխանության գնահատման միասնական ձև և կանոններ:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովը սահմանում է Կողմերի պետություններից որևէ մեկին որպես տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների էլեկտրոնային անձնագրերի համակարգերի ադմինիստրատոր նշանակելու կարգը:

Հոդված 8

Մինչև տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների անձնագրերի միասնական ձևի կիրառումը Ռուսաստանի Դաշնությունը, ռուսական Կողմի սահմանված կարգով, Բելառուսի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության լիազոր մարմիններին, որոնք որոշվում են Կողմերի կողմից,

ապահովում է Ռուսաստանի Դաշնության տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների) անձնագրերի՝ համապատասխան քանակությամբ ձևաթղթերով՝ տրանսպորտային միջոցները (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակները) Ռուսաստանի Դաշնություն մատակարարելու համար՝ Բելառուսի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության լիազորված մարմինների հայտերին համապատասխան:

Ռուսաստանի Դաշնության տրանսպորտային միջոցի (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի) անձնագրերի ձևակերպման պայման է տրանսպորտային միջոցի կամ տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի համապատասխանության հաստատումը այն պահանջներին, որոնք սահմանված են Ռուսաստանի Դաշնության՝ անվավոր տրանսպորտային միջոցների տեխնիկական ոլորտը կարգավորող օրենսդրությամբ:

Ռուսաստանի Դաշնության՝ տրանսպորտային միջոցի (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի) անձնագրի ձևաթղթի լրացումը կատարվում է Բելառուսի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության Արտադրող կազմակերպությունների կողմից՝ Ռուսաստանի Դաշնության լիազորված մարմինների կողմից սահմանված կարգով:

Ռուսաստանի Դաշնության՝ տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների) անձնագրերի ձևաթղթերի օգտագործման հաշվառումն ու հսկողությունն իրականացնում են Կողմերի պետությունների լիազորված մարմինները: Ռուսաստանի Դաշնության՝ տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների) անձնագրերի ձևաթղթերի օգտագործման մասին տեղեկությունների փոխանակման կարգը համաձայնեցվում է Կողմերի պետությունների լիազորված մարմինների հետ:

Հոդված 9

Կողմերի միջև ծագած վեճերը, որոնք կապված են սույն Համաձայնագրի կիրառման կամ մեկնաբանման հետ, լուծվում են խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Եթե վեճը Կողմերի կողմից չի լուծվում Կողմերից մեկի՝ մյուս Կողմին ուղղված՝ խորհրդակցություններ և բանակցություններ անցկացնելու մասին պաշտոնական գրավոր խնդրանքի ստացման օրվանից 6 ամսվա ընթացքում, ապա Կողմերի միջև վեճի լուծման միջոցի վերաբերյալ այլ պայմանավորվածության բացակայության դեպքում Կողմերից յուրաքանչյուրն այդ վեճը փոխանցում է Եվրասիական տնտեսական ընկերակցության դատարանի քննությանը:

Հոդված 10

Ըստ Կողմերի պայմանավորվածության՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 11

Սույն Համաձայնագիրը ենթակա է վավերացման, ժամանակավոր կիրառվում է ստորագրման օրվանից 60 օր հետո և ուժ մեջ է մտնում Կողմերի պետությունների՝ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ավանդապահի ստանալուց 5 օր հետո:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, լինելով սույն Համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր Կողմին ուղարկում է դրա հաստատված պատճենը:

Ստորագրվել է Մոսկվա քաղաքում 2014 թվականի օգոստոսի 15-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն:

Բելառուսի	Ղազախստանի	Ռուսաստանի
Հանրապետության	Հանրապետության	Դաշնության
Կառավարության կողմից՝	Կառավարության կողմից՝	Կառավարության կողմից՝

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2014 թվականի օգոստոսի 15-ին Մոսկվայում ստորագրված «Տրանսպորտային միջոցի անձնագրի (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի անձնագրի) և ինքնագնաց մեքենայի ու տեխնիկայի այլ տեսակների անձնագրի միասնական ձևերի ներդրման և էլեկտրոնային անձնագրերի համակարգերի կազմակերպման մասին» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն